

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА  
АРМЕНИЯ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< ---- >> -----2015թ.

N -----

**<<Ժողովուրդ>> օրաթերթի լրագրող  
Տաթև Հարությունյանին**

*Հարգելի տիկին Հարությունյան*

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին հասցեագրած Ձեր 2015 թվականի ապրիլի 1-ի հարցմանը հայտնվում է, որ Գագիկ Հարությունյանը հանդիսացել է ոչ թե <<Բաղրամյան>> գյուղի հիվանդանոցի գլխավոր բժիշկ, այլ՝ <<Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի <<Հիուսի մանուկներ>> առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մինչ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 30.03.2015 թվականի N29 կարգադրությունը Գագիկ Հարությունյանը հանդիսացել է վերոնշյալ ՓԲԸ-ի տնօրեն, և ոչ ոք չի խոչընդոտել վերջինիս աշխատանքային պարտականությունների և իրավունքների կատարմանը:

Նա զբաղեցրած պաշտոնից ազատվել է ընկերությունում իրականացված աուդիտորական ստուգման արդյունքներով արձանագրված խախտումների հիման վրա:

Իսկ ինչ վերաբերում է Գագիկ Հարությունյանի դատարան դիմելուն և վերադասության կարգով բողոքարկելուն, ապա դա հանդիսանում է նրա սահմանադրական իրավունքը:

Տեղեկացվում է նաև, որ Գագիկ Հարությունյանին իր զբաղեցրած պաշտոնից ազատումը մեր կողմից իրականացվել է գործող աշխատանքային օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կապ.՝ Փ. Կարապետյան  
Յու. Մանվելյան